



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

5880

323.1

U-23

1904

# ԱԶԳԱՅՆՈՒԹԵԱՆ ԷՈՒԹԻՒՆԸ

ՆՈՒԷՐ ՄԻՈՒԹԵԱՆ ՃԻՂԵՐԻՆ

Գրք. 54.

Արձուարկից

Միսիկանի Բիւրօի ազատ ապարան

1904

Պ. Ա. ԱՅՐԱՆԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

2010

4634 ւեֆ

№ Հրատարակ. 4. Հ. Ս. Միութեան Բիւրօի 5

383.1

Ա-23 ւեֆ

ԱԶԳԱՅՆՈՒԹԵԱՆ

ԷՈՒԹԻՒՆԸ

ՆՈՒՆԻՐ ՄԻՈՒԹԵԱՆ ՃԻՂԵՐԻՆ

1007 3071  
34157

ԷՉՈՒՆ

Արձուարեղ  
ՀԱՆՐԱՊԵ  
Գր. Միութեան Բիւրօի ազատ ապարան  
ՀՍԽՀ - ՍՍՐՄ 1904  
И. А. Мясникова  
Գ. ՄՅԱՆԻՎԱՆԻ ԱՆՎՈՂ

Ազգայնութիւնը չէ ներկայանում մեզ իբրև անհատների սոսկ հաւաքածու — փխրան, վաղանցուկ — այլ իբրև օրգանական մի ամբողջութիւն: Առկա է յարաբերութիւնը չէ, լակարտարին, նիւթական նշանները չեն, որ բնորոշում են այս կամ այն ազգը, այս պատճառովորով — կան սօցիալական-հոգեբանական խտրուկ պատճառներ: որոնք երկար ժամանակ անխնայ գործելով մարդկային այլազան համայնքների արգանդում, ստեղծում են նրանցից ազգային ուրոյն, առանձնայատուկ միութիւններ, իրենց էութեամբ մնայուն յարատև: Այդպիսի պատճառներ են ներքին փոխադարձ համակրութիւնը, կամ զգայնական նմանութիւնը, ապա կամք երբ ներդաշնակութիւնը, որից է ըզհանրական ճիւղը, համազգային գործակցութիւնը:

Անհատը այդ զարմանալի միութիւնների մէջ՝ չէ կարող այլ կերպ հասկացելը, բայց եթէ միայն իբրև մէկ անդամ այն կամքերի համազարկութեան, որոնց փոխադարձ յարաբերութիւնները կազմում են — չէզէլի արտայայտութեամբ — իւրաքանչիւր անդամի ըմբռնելի էութիւնը:

Այդ փաստի գորութեամբ՝ դիցուք յետևաւոր մեզ ըմբռնելի և ճանաչելի է գտնուած, միմիայն իբրև անդամ զգայութիւնների և կամեցողութիւն-

ների այն համակարգութեան, որը կազմում է լինազգայնութիւնը և որը դարձնում է յիշեալ անհատին ոչ թէ միայն մարդ տաճասարակ, այլ և լին:

Այդտեղից և առաջանում են ազգայնականութիւնները — ոչ յեղերը: Լին փոխարք հիմնականապէս տարբեր է ուսից, շեխից, ուսիւնից, սերբից, բուլղարից: Իւրաքանչիւր մի ազգ ունի իր մէջ այն, ինչ որ սօցիոլոգիան անուանում է հասարակագիտական դէտերմինիզմ պատճառական շղթայակցութիւն: Իւրաքանչիւր մի ազգ ունի մտքերի եւ զգառումների ինքնատիպհիւսւածք, որ առաջ է գալիս համայնքի ու անհատների մշտնական փոխազդեցութիւնից: Մտքերի, զգացումների և կամքերի այդ հիւսւածքն է, որ անցնելով ժառանգաբար սերնդից սերունդ՝ կազմում է ժողովրդի ոգին, ազգային գիտակցութիւնը:

Այս ինչպէս օրգանական բջիջների մեջ, այնպէս համայնքի անդամների մէջ՝ կայ մշտնջնական փոխազդեցութիւն: Պատմական էտիւցիայի ընթացքում մերթ համայնքն է իր բարքերի ու ժող բարձրացնում բնկած անհատին, մերթ անճատն է արտակարգ առաքիւնութիւններով արթնացնում ու ազնայնում համայնքը: Մեր «անձնարարութիւնը» մեր ֆիզիքական, մտաւոր ու բարոյական է սր ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի հիւսւածք, որի նիւթերը մեծ մասամբ փոխառուած են բնդանաւոր ազգային շտեմարանից: Իսկ այդ վերջինը սերիչ բան չէ, բայց եթէ արդիւնք բոլոր անհատների համարաշխ գործակցութեան:

Ինչպէս որոշել ազգայնութեան կամ հայրենիքի գաղափարը, նրա ճշգրիտ էութիւնը: Մի կիճուտ հարց է դա, որ վրադեցրել թէօրետիկոններին: Կան գաղափարներ, որոնք տրամաբանական յստակ որոշման չեն ենթարկուած:

Ազգայնութիւնը հետաքրքրում է և՛ էսոխոլոգին սօցիոլոգին և նոյնիսկ իրաւագետին ու քաղաքագէտին: Իւրաքանչիւրը նրանցից՝ հարցը իր անսակէտով լուսաբանելով՝ յանգում է մի շսկ եզրակացուեան. սրը ներկայացնում է զաղափարի էութեան մի որոշ կտոր: Յեղաբանը, հեռուելով բնագիտական մեթոդին, առաջ բերում ընտրողութեան, ժառանգականութեան, յարմարումի կայն օրէնքներրի որ և կիրառում է մարդտեսակների կամ ցեղեր, վրայ, որոնք տարբերում են դանգի կազմութամբ, կաշւի, մազի, աչքերի դոյնսով եւայլն: Սօցիոլոգը է հասարակաբանը, ինչպէս վերը տեսանք. քննում է մարդուն ոչ միայն իբրև տիեզերական կոյր ուժերի ծնունդ, այլև իբրև մի գոյութիւն, որ ընդունակ է մտածել, գգալ եւ կամենալ: Թէև մարդկային այդ երեք կարողութիւնները վերջին քրննութեամբ պայմանաւորում նոյն տիեզերական ուժերով, այնուամենայնիւ. նրանք ունեն իրենց զարգացման ուրոյն պատմութիւնը եւ ենթակայ են սօցիոլոգիային, հասարակական գիտութեան:

Վերջապէս, իրաւաբանը եւ քաղաքագէտը ազգային դողափարի հետ կապում են սրոշ իրաւական, քաղաքական արտօնութիւններ:

Եւ տուտ է դալիս խառնաշփոթութիւն: Եւ մենք

դժւարանում ենք դանել մի բանաձև, որ կիռարէր հաւաստրապէս բոլոր երկրների ու ժողովուրդների վրայ:

Ընդհանուր ծագում, Ֆիզիքական ու հոգեկան նմանութիւններ, բնդհանուր հող, լեզու, կրօն. ընդհանուր պատմութիւն և այլն և այլն — ահա այն գործօնները, որոնք դատ-դատ կամ մի բանիսը միասին, կամ բոլորը մէկտեղ՝ կոչւած են լուսարանել տզգայնութեան իմաստը, բայց եւ անկարող են մատակարարել մի զուա գիտական, բուււրար որոշում:

Անշուշտ, մեծ ցեղաբանական պայմանների, ինչպէս նաեւ լեզւի ու կրօնի արդեցութիւնը ազդութիւնների վարչացման վրայ: Ո՞վ կարող է ուրանալ, որ Ֆիզիքական բնդհանուր ծագումը հէնց իսկզբանէ ազդիւր է եղել նաեւ հոգեկան համակրութիւնների: Ո՞վ կարող է ժխտել լեզւի հսկայական ուժը, որը մի ժողովրդի դարևոր փորձութիւնների միջոցին մթերում ու պահպանում է հորագատութեամբ բնդհանուր բարքերն ու աւանդութիւնները..

Լեզուն բաժանում է մի ազգի ճտկատագիրը, մըշակում, հասունանում է նրա ինքնաճանաչութեան զարգացման հետ միատին. ամբարում ու յուերժանում է կրօնական ծէսերի, օրէնսգրանտն ակտերի-դրական յիշատակաբանների մէջ ևւ այլն: Երբ այդ թանգակիէ գանձը սկսում է սպառել, երբ մայրենի լեզուն սկսում է խեղաթիւրել կամ իսպառ դուրս նետել գործածութիւնից, — գտ արդէն նշան է ազգութեան այլատեւման: Այնքան մեծ է լեզւի ազ-

դեցուծիւնը՝ որ սօցիոլոգներից ոմանք նրա վրա  
են հիմնում ազգայնութիւնը։ Այդ նոյն կարծիքի  
արտայայտութիւնն է Արևոտի ծանօթ ստանաւորը։

Ո՞րն է գերմանացու հայրենիքը,  
Յոյց տուր ինձ, վերջապէս, այդ երկիրը.  
Նա տարածւում է ամէն տեղ,  
Ուր գերմանական լեզուն է հնչում,  
Ուր Աստուածն երկնքում լիզեր է կրգում...

Անժխտելի է և կրօնի դերը։ Նրա ազդեցու-  
թիւնը, մեծապէս թուլացած մեր օրերում, հզօր  
էր վաղն մի ժամանակներում։ «Ամեն մի կրօն սը-  
կրենիքում մի ազգութիւն էր.» — ասում է յատնի  
սօցիոլոգ-կրօնադէտ Մարտ Միլլէր։ Արդարև կրօնը  
մարդկութեան նախնական շրջանում միաւորող կա-  
պքն էր գերդաստանի մէջ, աչաքապքում և վեր-  
ջապէս պետութեան մէջ։ Յունական քաղաքները,  
(Ապարտ, Սթէնը և այլն), որոնք սկզբում ներկայ-  
ացնում էին մի մի հայրենիք և ուր հեղինակմի,  
յոյն ազգայնութեան սաղմերը գրեցին, — յունական  
քաղաքները ապրում էին աստուածների բանակալու-  
թեան տակ։ Եւ երբ Սօկրատէսին, աշխարհիս մե-  
ծագոյն փիլիսոփաներից մէկին՝ մահուան էին դատա-  
պարտում, նրա գահիճները պտտմարտաբանում էին,  
թէ նա մեղանշիկ է հայրենիքի գէձ, քանի որ մե-  
ղանշիկ է աստուածների գէձ։

Քանի քանի ազգեր պտնայանն են դարերի ըն-  
թացքում իրենց ինքնուրոյնութիւնը. շնորիւ իրենց  
կրօնական միութեան...

Այնուամենայնիւ, կան ազգութիւններ և այդ նը-

շահաւոր գործօններից դուրս, — կամ լեզուից ու  
կրօնից, կամ թէ աշխարհագրական և ցեղագրա-  
կան պայմաններից։ Այ մէկը դրանցից չէ ներկայս  
անում իբրև արամարանօրէն տնհրածեշտ պայման-  
մի ազգայնութիւն կազմելու համար։

Ազգ է շլէյցարիան, որ ունի տունալը երեք  
տարբեր ցեղեր, երեք լեզուներ և նոյնքան կրօններ։  
Ազգ է համարում հրէութիւնը, որ վաղուց զբը-  
կւած հայրենի հողից՝ ծաւալել է բովանդակ եր-  
կրրագնդի վրայ, և ամեն տեղ ցոյց է տալիս օրի-  
նակիլի համերաշխութիւն։

Ազգ է Մեծ-Քրիտանեան, որ նոյնպէս կազմւած է  
ստարբեր ցեղերից — կելտերից, սաքսերից ու նոր-  
մտեներից։ Ռ՞րտեղ էմնում ազգայնական զաղափառի  
րի «սուբոտրատումը», նրա ամենաէական յատ-  
կանիչը...

Նա մնում է անբմբռնելի, — մենք չենք կարող  
որոշել նրան, ոչ էլ նկարագրել լիակատար կերպով  
նոյն իսկ չատ որոշ անհատականութեան տեր ազ-  
գութիւնները գժւարանում են բնորոշել դիտակա-  
նորեն Մի գաղտնիք կայ ազգայնութեան գաղա-  
փարի մէջ, որ երբէք չէ դրսևորւում. որ խոյս է  
մեր գիտազութիւնից — մի գաղտնիք կայ, որ աւելի  
բարձր է, աւելի հարուստ, աւելի խորունկ, աւելի  
ընդարձակ, քան թէ բոլոր բորոշ գծերը, որ մենք  
կարող ենք թւել — լեզու, կրօն, արիւնակցութիւն և  
այլն։


Յամենայն դէմս, մենք գործ ունենք մի կենդանի ի-  
րողութեան հետ, — մեք առջև կանգնած է մի

չատ կօնկրեա անհասականութիւն, որ իբօք մէկ է իր ընտրու զծերով, տարբեր ուրիշներից:

Ազգ կայ ամեն տեղ ուր ինչպէս ասում է Սր- ախարա Միլլ' մարդիկ միտցած են ընհանուր հա- մակրութիւններով, որոնց զորութեամբ նրանք հա- կրած են ոչ միայն գործելու համերաշխութեամբ և ապրելու միևնոյն կառավարութեան տակ, այլ և տենչալու, որ այդ կառավարութիւնը կազմեն հէնց իրենք, կամ իրենց մի մասը:

Ազգ կայ ամեն տեղ, ուր ինչպէս ասում է Ռ ր- ն ան' կայ գարաւոր մի անցեալ. հիւսած ճիգերից ու զոհողութիւններից, ուր կայ մի անցեալ՝ փայ- լուն, հերոսական սխրագործութիւնների, ուր կան պտտմական աւանդութիւններ... Սյն կախները, որ դարերի ընթացքում մղել է մի համայնք ընդհանուր թշնամու դէմ, այն օրախութիւնները՝ որ նա ու- նեցել է յազմանակներից, այն ասրապանքները, որ նա ունեցել է պարտութիւններից, այդ երգերը, որ նա հիւսել է յազմանակների ու պարտութիւնների առթիւ, — աստ այդ վոնմ համերաշխութեան անունն է ազգ: Մենք այն կոչում ենք նաև հայրենիք: Եր- կու բռուրի մէջ տարբերութիւնը աւելի ձևական է քան թէ էական:

Նա այնքան զինգանի է, այդ համերաշխութիւնը, մարդկանց սրտերում, որ զեռ հնադարեան, հօմե- րական ժամանակներում բարձրաձայն հռչակում էր կռիւր յանուն հայրենիքի, և յունական հանճարը բացառանշում էր շումերոսի բերանով „Մեռեր ու մի զզջար, սրով հետև պանծալի բան է՝ մեռնել հայ- րենիքի համար”





ТЕТРАДИ СОБСТВЕННАГО  
ИЗДАТЕЛЬЯ

МАГАЗИНЪ

ПИСЧЕБУМАЖИ ИЗДѢЛІИ И ПИСЬМЕН. ПРИНАДЛЕ

*А. Теръ Саркисьян*

И. С. ТЕРЪ-САРКИСЬЯН

201 ЗВЪ ТИФЛИСЬ

ДВОРЦОВАЯ

201

« Уаզաշին գրադարան »



NL0039454

2025

